**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՀԾԿՀ-20/6-ԳՀԾՁԲ-1**

ք. Երևան

«22» 01 2020թ.

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Սաֆարյանի, որը գործում է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի և այլ օրենքների հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Օվնե» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Բաղդասարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **3191000 (երեք միլիոն հարյուր իննսունմեկ հազար)** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[22] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

---

*[22] Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 **Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով:** Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
| --- | --- |
| ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով | «Օվնե» ՍՊԸ |
| ք. Երևան, Սարյան 22 | ք.Երևան, Մյասնիկյան 43/10 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | Կոնվերս Բանկ ՓԲԸ |
| Հ/Հ 900011183010 | Հ/Հ 1930069052700100 |
| ՀՎՀՀ 02531594 | ՀՎՀՀ 00428675 |
| Գլխավոր քարտուղար՝ Ա. Սաֆարյան | Տնօրեն՝ Ա. Բաղդասարյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| | Կ.Տ. |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Հավելված N 1
« 22 » 01 2020թ. կնքված
ՀԾԿՀ-20/6-ԳՀԾՁԲ-1 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը** 2020թ |
| 1 | 50111130/501 | Ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների /համաձայն կից ներկայացված ցուցակի/: | դրամ | 780400 | 1 | ք. Երևան | Ծառայության մատուցումներն իրականացվում են համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա |
| 2 | 50111130/502 | | | 232700 | | | |
| 3 | 50111130/503 | | | 782900 | | | |
| 4 | 50111130/504 | | | 394200 | | | |
| 5 | 50111130/505 | | | 230700 | | | |
| 6 | 50111130/506 | | | 242700 | | | |
| 7 | 50111130/516 | | | 270200 | | | |
| 8 | 50111130/517 | | | 257200 | | | |

## ՑՈՒՑԱԿ

| Հ/Հ | Ծառայության ընթացքում օգտագործվող պահեստամասերի և այլ օժանդակ նյութերի անվանումները | Ֆորդ Ֆոկուս 2015թ. (Ford Focus ) ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ | Կիա Սերատո 2010թ. (Kia Cerato) ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ | Հյունդայի Էլանտրա 2013թ. (Hyundai Elantra) ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ | Նիսսան Ալտիմա 2008թ. (Nissan Altima) ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ | Տոյոտա Կորոլա 2011թ. (Toyota Corolla) ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ | Տոյոտա Կորոլա 2008թ. (Toyota Corolla) ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ | Տոյոտա Քեմրի 2014թ. (Toyota Camry) ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ | Տոյոտա Քեմրի 2008թ. (Toyota Camry) ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | առջևի արգելակման կոճղակ /կոմպլեկտ/ | 10925 | 7260 | 7249 | 8110 | 7463 | 7494 | 7941 | 8072 |
| 2 | առջևի արգելակման կոճղակների փոխարինում | 2731 | 1911 | 1908 | 2027 | 1964 | 1972 | 1985 | 2018 |
| 3 | հետևի արգելակման կոճղակ /կոմպլեկտ/ | 10925 | 6878 | 6867 | 7704 | 7070 | 7100 | 7544 | 7668 |
| 4 | հետևի արգելակման կոճղակների փոխարինում | 2731 | 1911 | 1908 | 2027 | 1964 | 1972 | 1985 | 2018 |
| 5 | օդի զտիչ / 1 հատ / | 3551 | 2484 | 2480 | 2636 | 2553 | 2564 | 2581 | 2623 |
| 6 | օդի զտիչի փոխարինում | 819 | 573 | 572 | 608 | 589 | 592 | 596 | 605 |
| 7 | կայծաբաշխիչ կոճ / 1 հատ / | 18573 | 9553 | 10683 | 13381 | 10605 | 11044 | 11117 | 12511 |
| 8 | կայծաբաշխիչ կոճի փոխարինում | 1639 | 1146 | 1145 | 1216 | 1178 | 1183 | 1191 | 1211 |
| 9 | վառելիքի զտիչ / 1 հատ / | 12018 | 7260 | 7249 | 8110 | 4714 | 4733 | 4764 | 4843 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 10 | վառելիքի զտիչի փոխարինում | 4916 | 3439 | 3434 | 3649 | 3535 | 3550 | 3573 | 3632 |
| 11 | անտիֆրիզ / 1 լիտր/ | 2185 | 1529 | 1526 | 1622 | 1571 | 1578 | 1588 | 1614 |
| 12 | անտիֆրիզի փոխարինում | 2458 | 1720 | 1717 | 1825 | 1768 | 1775 | 1787 | 1816 |
| 13 | վառոցքի մոմեր / 4 հատ / | 19119 | 11464 | 11446 | 12165 | 11784 | 11833 | 11911 | 12107 |
| 14 | վառոցքի մոմերի փոխարինում | 3933 | 2751 | 2747 | 2920 | 2828 | 2840 | 2859 | 2906 |
| 15 | փոխանցման տուփի յուղ | 4643 | 3248 | 3243 | 3447 | 3339 | 3353 | 3375 | 3430 |
| 16 | փոխանցման տուփի յուղի փոխարինում | 8194 | 5732 | 5723 | 6082 | 5892 | 5916 | 5955 | 6054 |
| 17 | շարժիչի յուղ / 1 լիտր/ | 3824 | 2675 | 2671 | 2838 | 2750 | 2761 | 2779 | 2825 |
| 18 | շարժիչի յուղի փոխարինում | 819 | 573 | 572 | 608 | 589 | 592 | 596 | 605 |
| 19 | շարժիչի յուղի զտիչ / 1 հատ / | 3551 | 2293 | 2289 | 2433 | 2357 | 2367 | 2382 | 2421 |
| 20 | շարժիչի յուղի զտիչի փոխարինում | 819 | 573 | 572 | 608 | 589 | 592 | 596 | 605 |
| 21 | ինժեկտորի ֆարսունկաների մաքրում / 4 հատ / | 12018 | 8407 | 8394 | 8921 | 8641 | 8677 | 8735 | 8879 |
| 22 | առջևի / հետևի / անվաբացքի կարգաբերում | 7648 | 5350 | 5341 | 6488 | 6285 | 6311 | 6352 | 6457 |
| 23 | տեխ.զննում | 2731 | 1911 | 1908 | 2027 | 1964 | 1972 | 1985 | 2018 |
| 24 | համակարգչային դիագնոստիկա | 2731 | 1911 | 1908 | 2027 | 1964 | 1972 | 1985 | 2018 |
| 25 | առջևի մեղմիչ / 1 հատ / | 27313 | 17578 | 17932 | 21896 | 18854 | 18933 | 19057 | 21793 |
| 26 | առջևի մեղմիչի փոխարինում | 6555 | 4586 | 4578 | 4866 | 4714 | 4733 | 4764 | 4843 |
| 27 | հետևի մեղմիչ / 1 հատ / | 25674 | 15285 | 15261 | 19058 | 16105 | 16172 | 18660 | 18968 |
| 28 | հետևի մեղմիչի փոխարինում | 6282 | 3439 | 3434 | 4663 | 3535 | 3550 | 3573 | 3632 |
| 29 | ղեկի գնդաձև հոդակապ / 1 հատ / | 8740 | 5732 | 5723 | 6082 | 5892 | 5916 | 6750 | 6861 |
| 30 | ղեկի գնդաձև հոդակապի փոխարինում | 3824 | 2293 | 2289 | 2838 | 4714 | 4733 | 4764 | 4843 |
| 31 | անվադողերի հավասարակշռում / 1 հատ / | 1256 | 879 | 878 | 933 | 903 | 907 | 913 | 928 |
| 32 | կայունարարի վռան /ութնյակ / - / 1 հատ / | 4370 | 3057 | 3052 | 3244 | 3142 | 3155 | 3176 | 3229 |
| 33 | կայունարարի վռանի /ութնյակ / փոխարինում | 3278 | 2293 | 2289 | 2433 | 2357 | 2367 | 2382 | 2421 |
| 34 | դիմապակի մաքրող խոզանակ / 1 հատ/ | 3824 | 2293 | 2289 | 2433 | 2357 | 2367 | 2382 | 2421 |
| 35 | գնդաձև հոդակապ / 1 հատ / | 7101 | 4203 | 4197 | 5271 | 4321 | 4339 | 4764 | 4843 |
| 36 | գնդաձև հոդակապի փոխարինում | 4916 | 3057 | 3052 | 3649 | 2357 | 2367 | 2382 | 2421 |
| 37 | կայունարարի ռետինե վռան / 1 հատ / | 3824 | 2484 | 2480 | 2636 | 2553 | 2564 | 2581 | 2623 |
| 38 | կայունարարի ռետինե վռանի փոխարինում | 3278 | 2216 | 2213 | 2352 | 2278 | 2288 | 2303 | 2341 |
| 39 | ակումուլյատորային մարտկոց /ներառյալ փոխարինումը/ / 1 հատ / | 43701 | 28659 | 28614 | 32439 | 29460 | 29582 | 29777 | 32287 |
| 40 | ինժեկտորի ֆարսունկա / 1 հատ / | 20758 | 13374 | 13353 | 15409 | 13355 | 13411 | 13499 | 13722 |
| 41 | ինժեկտորի ֆարսունկայի փոխարինում | 4370 | 3057 | 3052 | 3244 | 3142 | 3155 | 3176 | 3229 |
| 42 | հետևի խլարարի բաք / 1 հատ / | 21304 | 15667 | 15642 | 17841 | 14926 | 14988 | 16675 | 16950 |
| 43 | հետևի խլարարի բաքի փոխարինում | 3824 | 2675 | 2671 | 2838 | 2750 | 2761 | 2779 | 2825 |
| 44 | շարժիչի բարձիկ / 1 հատ/ | 24582 | 16814 | 17169 | 18247 | 18069 | 18144 | 18660 | 18968 |
| 45 | շարժիչի բարձիկի փոխարինում | 5244 | 3668 | 3663 | 3893 | 3771 | 3787 | 3811 | 3874 |
| 46 | փոխանցման տուփի բարձիկ | 22943 | 14903 | 14879 | 16625 | 15319 | 15383 | 16278 | 16547 |
| 47 | փոխանցման տուփի բարձիկի փոխարինում | 5244 | 3668 | 3663 | 3893 | 3771 | 3787 | 3811 | 3874 |
| 48 | դիմահար լամպ / 1 հատ/ | 2185 | 1529 | 1526 | 1622 | 1571 | 1578 | 1588 | 1614 |
| 49 | դիմահար լամպի փոխարինում | 656 | 459 | 458 | 487 | 471 | 473 | 476 | 484 |
| 50 | **հեռահար լամպ / 1 հատ/** | 2185 | 1529 | 1526 | 1622 | 1571 | 1578 | 1588 | 1614 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 51 | հեռահար լամպի փոխարինում | 656 | 459 | 458 | 487 | 471 | 473 | 476 | 484 |
| 52 | լամպ / 1 հատ/ | 819 | 573 | 572 | 608 | 589 | 592 | 596 | 605 |
| 53 | լամպի փոխարինում | 656 | 459 | 458 | 487 | 471 | 473 | 476 | 484 |
| 54 | վառելիքի պոմպ / 1 հատ/ | 22943 | 14903 | 14879 | 17030 | 15319 | 15383 | 15484 | 15740 |
| 55 | վառելիքի պոմպի փոխարինում | 5244 | 3668 | 3663 | 3893 | 3771 | 3787 | 3811 | 3874 |
| 56 | արգելակման համակարգի հեղուկ | 3278 | 2293 | 2289 | 2433 | 2357 | 2367 | 2382 | 2421 |
| 57 | խլարարի ռետինե ամրակ / 1 հատ / | 1366 | 955 | 954 | 1014 | 982 | 986 | 993 | 1009 |
| 58 | թերմոստատ / 1 հատ / | 9833 | 5732 | 5723 | 6488 | 5499 | 5522 | 5558 | 5650 |
| 59 | թերմոստատի փոխարինում | 6555 | 4586 | 4578 | 4866 | 4714 | 4733 | 4764 | 4843 |
| 60 | շարժիչի ջրի պոմպ / 1 հատ / | 11471 | 7260 | 7249 | 8921 | 8249 | 9861 | 9926 | 8879 |
| 61 | շարժիչի ջրի պոմպի փոխարինում | 9833 | 6878 | 6867 | 7299 | 7070 | 7100 | 7147 | 7264 |
| 62 | խլարարի կատալիզատոր / 1 հատ / | 185728 | 129923 | 129718 | 137866 | 133550 | 134106 | 134990 | 137218 |
| 63 | խլարարի կատալիզատորի փոխարինում | 19119 | 13374 | 13353 | 14192 | 13748 | 13805 | 13896 | 14125 |
| 64 | պոմպ՝ դիմապակին ջրով մաքրելու համար / 1 հատ / | 17480 | 10700 | 10683 | 11759 | 10605 | 10650 | 10720 | 10897 |
| 65 | դիմապակին ջրով մաքրող պոմպի փոխարինում | 4370 | 3057 | 3052 | 3244 | 3142 | 3155 | 3176 | 3229 |
| 66 | հովացման համակարգի ընդարձակման բաք / 1 հատ / | 16934 | 11082 | 11064 | 12976 | 10998 | 11044 | 11117 | 11300 |
| 67 | ընդարձակման բաքի փոխարինում | 2731 | 1911 | 1908 | 2027 | 1964 | 1972 | 1985 | 2018 |
| 68 | ընդարձակման բաքի կափարիչ / 1 հատ / | 8194 | 5350 | 5341 | 6082 | 5499 | 5522 | 5558 | 5650 |
| 69 | առջևի մեղմիչի հենարան առանցքակալով / 1 հատ/ | 11471 | 7643 | 7630 | 9732 | 7463 | 7494 | 7941 | 8072 |
| 70 | առջևի մեղմիչի հենարանի փոխարինում | 6555 | 4586 | 4578 | 4866 | 4714 | 4733 | 4764 | 4843 |
| 71 | առջևի դարձակի առանցքակալ / 1 հատ/ | 13656 | 8407 | 8394 | 10543 | 8249 | 8283 | 8338 | 8475 |
| 72 | առջևի դարձակի առանցքակալի փոխարինում | 8194 | 5732 | 5723 | 6082 | 5892 | 5916 | 5955 | 6054 |
| 73 | հետևի դարձակի առանցքակալ / 1 հատ/ | 22943 | 14903 | 17169 | 17030 | 16497 | 16960 | 17072 | 18161 |
| 74 | հետևի դարձակի առանցքակալի փոխարինում | 6555 | 4586 | 4578 | 4866 | 4714 | 4733 | 4764 | 4843 |
| 75 | խլարարի վերանորոգում | 13656 | 9553 | 9538 | 10137 | 9820 | 9861 | 9926 | 10090 |
| 76 | անվադողերի վուլկանացում | 1093 | 764 | 763 | 811 | 786 | 789 | 794 | 807 |
| 77 | փոխանցման տուփի հանում և տեղադրում, վերանորոգում | 87401 | 55408 | 55321 | 63256 | 51849 | 52065 | 58760 | 59730 |
| 78 | կցորդման սկավառակ / 1 հատ / | 32776 | 18342 | 18313 | 20274 | 19640 | 19721 | 23822 | 24215 |
| 79 | կցորդման սկավառակի սալի և սառանցկակալի փոխարինում | 26220 | 18342 | 18313 | 19463 | 18854 | 18933 | 19057 | 19372 |
| 80 | կցորդման սալ / 1հատ / | 37146 | 20635 | 20602 | 23518 | 22782 | 24455 | 24616 | 23408 |
| 81 | առջևի ձգաձողի վռան / 1 հատ / | 4370 | 2675 | 2671 | 3244 | 2553 | 2564 | 2779 | 2825 |
| 82 | կցորդման առանցկակալ / 1 հատ / | 36599 | 22928 | 22891 | 27573 | 26710 | 26821 | 27792 | 28251 |
| 83 | ղեկի ուժեղարար / 1 հատ / | 51895 | 33245 | 33193 | 37305 | 32995 | 33132 | 33350 | 33901 |
| 84 | ղեկի ուժեղարարի փոխարինում | 10925 | 7643 | 7630 | 8110 | 7856 | 7889 | 7941 | 8072 |
| 85 | ղեկային համակարգ / 1 հատ / | 98327 | 61140 | 61044 | 68933 | 60883 | 59164 | 59554 | 60537 |
| 86 | ղեկային համակարգի փոխարինում | 10925 | 7643 | 7630 | 8110 | 7856 | 7889 | 7941 | 8072 |
| 87 | օդի կարգավորման էլեկտրոնային ցուցիչ / 1 հատ / | 39331 | 17578 | 17550 | 29195 | 18069 | 18144 | 18263 | 26636 |
| 88 | դիմապակի մաքրող հեղուկ / 1 հատ / | 2731 | 1911 | 1908 | 2027 | 1964 | 1972 | 1985 | 2018 |
| 89 | արգելակման օդային կարգավորիչ (վակում) /1 հատ/ | 38238 | 24838 | 24799 | 35683 | 23175 | 23271 | 24616 | 25022 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 90 | արգելակման օդային կարգավորիչի (վակում) փոխարինում /1 հատ/ | 13110 | 8407 | 8394 | 10137 | 7856 | 7889 | 7941 | 8072 |
| 91 | սրահի ֆիլտր /1 հատ/ | 7648 | 4586 | 4578 | 6082 | 4321 | 4339 | 4367 | 4439 |
| 92 | սրահի ֆիլտրի փոխարինում | 656 | 459 | 458 | 487 | 471 | 473 | 476 | 484 |
| 93 | հովացման համակարգի ռադիատոր | 37146 | 22545 | 22510 | 25951 | 27496 | 27610 | 29777 | 30269 |
| 94 | հովացման համակարգի ռադիատորի փոխարինում | 11471 | 7260 | 7249 | 8110 | 7463 | 7494 | 7544 | 7668 |
| 95 | ղեկային համակարգի վռան | 1093 | 764 | 763 | 811 | 786 | 789 | 794 | 807 |
| 96 | ղեկային համակարգի վռանի փոխարինում | 546 | 382 | 382 | 405 | 393 | 394 | 397 | 404 |
| 97 | ղեկի կոնտակտ/շլեյֆ/ | 19119 | 11464 | 11446 | 15409 | 11784 | 11833 | 13896 | 14125 |
| 98 | ղեկի կոնտակտի /շլեյֆ/փոխարինում | 4370 | 3057 | 3052 | 3244 | 3142 | 3155 | 3176 | 3229 |
| 99 | ղեկի ուժեղարարի յուղ | 3278 | 2293 | 2289 | 2433 | 2357 | 2367 | 2382 | 2421 |
| 100 | ղեկի ուժեղարարի յուղի փոխարինում | 9833 | 6878 | 6867 | 7299 | 7070 | 7100 | 7147 | 7264 |
| 101 | հետևի լապտերի բլոկ | 2731 | 1911 | 1908 | 2027 | 1964 | 1972 | 1985 | 2018 |
| 102 | հետևի լապտերի բլոկի փոխարինում | 2185 | 1529 | 1526 | 1622 | 1571 | 1578 | 1588 | 1614 |
| 103 | ապակիների էլեկտրական սեղմիչ | 9833 | 6114 | 6104 | 6893 | 5892 | 5916 | 5955 | 6054 |
| 104 | ապակիների էլեկտրական սեղմիչի փոխարինում | 1639 | 1146 | 1145 | 1216 | 1178 | 1183 | 1191 | 1211 |
| 105 | հովացման համակարգի (կոնդիցաների) լիցքավորում | 10925 | 7643 | 7630 | 8110 | 7856 | 7889 | 7941 | 8072 |
| 106 | հովացման համակարգի (կոնդիցաների) վերանորոգում | 21850 | 15285 | 15261 | 16220 | 15712 | 15777 | 15881 | 16143 |
| 107 | ներքևի լծակի վռան | 6555 | 3439 | 3434 | 3244 | 3142 | 3155 | 3176 | 3229 |
| 109 | ներքևի լծակի վռանի փոխարինում | 8194 | 5732 | 5723 | 6082 | 5892 | 5916 | 5955 | 6054 |
| 110 | էլեկտրական մալուխների և սարքերի վերանորոգում | 10925 | 7643 | 7630 | 8110 | 7856 | 7889 | 7941 | 8072 |
| 111 | վառարանի ռադիատոր | 35507 | 24456 | 24417 | 29195 | 25139 | 25243 | 25410 | 25829 |
| 112 | վառարանի ռադիատորի փոխարինում | 24582 | 22928 | 22891 | 24329 | 23568 | 23666 | 23822 | 24215 |
| 113 | դիմացի լապտեր | 32776 | 7643 | 1908 | 8110 | 7856 | 7889 | 7941 | 8072 |
| 114 | դիմացի լապտերի փոխարինում | 4370 | 7643 | 1908 | 8110 | 7856 | 7889 | 7941 | 8072 |
| 115 | քսենոնային լամպ | 7101 | 4968 | 4960 | 5271 | 5106 | 5128 | 5161 | 5247 |
| 116 | քսենոնային լամպի փոխարինում | 2185 | 1529 | 1526 | 1622 | 1571 | 1578 | 1588 | 1614 |
| 117 | քսենոնային լամպի բլոկ | 8194 | 5732 | 5723 | 6082 | 5892 | 5916 | 5955 | 6054 |
| 118 | քսենոնային լամպի բլոկի փոխարինում | 1639 | 1146 | 1145 | 1216 | 1178 | 1183 | 1191 | 1211 |
| 119 | արգելակման սկավառակ | 17480 | 12228 | 12209 | 12976 | 12569 | 12622 | 12705 | 12915 |
| 120 | արգելակման սկավառակի փոխարինում | 3824 | 2675 | 2671 | 2838 | 2750 | 2761 | 2779 | 2825 |
| 121 | շարժիչի ատամնավոր փոկ | 9833 | | | | | | | |
| 122 | շարժիչի ատամնավոր փոկի փոխարինում | 24582 | | | | | | | |
| 123 | շարժիչի փոկ | 8740 | 6114 | 6104 | 7299 | 6285 | 6311 | 6750 | 6861 |
| 124 | շարժիչի փոկի փոխարինում | 2731 | 1911 | 1908 | 2027 | 1964 | 1972 | 1985 | 2018 |
| 125 | գեներատոր | 51895 | 32481 | 32429 | 29195 | 28281 | 28399 | 29777 | 30269 |
| 126 | գեներատորի վերանորոգում | 16388 | 11464 | 11446 | 12165 | 11784 | 11833 | 11911 | 12107 |
| 127 | գեներատորի փոխարինում | 8194 | 5732 | 5723 | 6082 | 5892 | 5916 | 5955 | 6054 |
| 128 | հետևի լապտեր | 37146 | 24838 | 24799 | 25951 | 25139 | 25243 | 23822 | 24215 |
| 129 | հետևի լապտերի փոխարինում | 8194 | 5732 | 5723 | 6082 | 5892 | 5916 | 5955 | 6054 |
| **130** | **ընդհանուր փական** | **18573** | **12228** | **12209** | **14598** | **14141** | **13411** | **13499** | **13722** |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 131 | բռնկման փականի փոխարինում | 6555 | 4586 | 4578 | 4866 | 4714 | 4733 | 4764 | 4843 |
| 132 | բռնկման գեներատոր | 49163 | 28659 | 28614 | 35683 | 34173 | 34315 | 34542 | 35112 |
| 133 | բռնկման գեներատորի փոխարինում | 8194 | 5732 | 5723 | 6082 | 5892 | 5916 | 5955 | 6054 |
| 134 | վառարանի ռադիատոր բացիչ | 7648 | 4968 | 4960 | 5271 | 4714 | 4733 | 4764 | 4843 |
| 135 | վառարանի ռադիատորի բացիչի փոխարինում | 273 | 191 | 191 | 203 | 196 | 197 | 199 | 202 |
| 136 | ներքևի լծակ | 19119 | 12228 | 12209 | 15814 | 12177 | 12227 | 11911 | 12107 |
| 137 | ներքևի լծակի փոխարինում | 8194 | 5732 | 5723 | 6082 | 5892 | 5916 | 5955 | 6054 |
| 138 | արգելակման սկավառակի կոմպլեկտ | 15295 | 10317 | 10301 | 12570 | 11391 | 11438 | 11911 | 12107 |
| 139 | արգելակման սկավառակի կոմպլեկտի փոխարինում | 4370 | 3057 | 3052 | 3244 | 3142 | 3155 | 3176 | 3229 |
| 140 | կցորդման սկավառակի կոմպլեկտ | 40969 | | | | | | | |
| 141 | կցորդման սկավառակի կոմպլեկտի փոխարինում | 31683 | | | | | | | |
| 142 | շարժիչի փոկի առանցկակալ | 8194 | 5732 | 5723 | 5677 | 6285 | 6311 | 6352 | 6457 |
| 143 | շարժիչի փոկի առանցկակալի փոխարինում | 2185 | 1529 | 1526 | 1622 | 1571 | 1578 | 1588 | 1614 |
| 144 | դիմացի թափարգելի հանում և տեղադրում | 6555 | 4586 | 4578 | 4866 | 4714 | 4733 | 4764 | 4843 |
| 145 | հետևի թափարգելի հանում և տեղադրում | 6555 | 4586 | 4578 | 4866 | 4714 | 4733 | 4764 | 4843 |
| 146 | դիմացի թափարգելի վերանորոգում | 19119 | 13374 | 13353 | 14192 | 13748 | 13805 | 13896 | 14125 |
| 147 | հետևի թափարգելի վերանորոգում | 19119 | 13374 | 13353 | 14192 | 13748 | 13805 | 13896 | 14125 |
| 148 | թափքի հղկում և ներկում դմ$^2$ | 4370 | 3057 | 3052 | 3244 | 3142 | 3155 | 3176 | 3229 |
| 149 | դիմացի լապտերների կարգաբերում | 2185 | 1529 | 1526 | 1622 | 1571 | 1578 | 1588 | 1614 |
| 150 | լեդ լույսեր | 10925 | 7643 | 7630 | 8110 | 7856 | 7889 | 7941 | 8072 |
| 151 | լեդ լույսերի փոխարինում | 1639 | 1146 | 1145 | 1216 | 1178 | 1183 | 1191 | 1211 |
| 152 | հակամառախուղային լապտեր | 20758 | 13757 | 12590 | 12570 | 12177 | 11833 | 11911 | 12107 |
| 153 | հակամառախուղային լապերի փոխարինում | 5463 | 3821 | 3815 | 4055 | 3928 | 3944 | 3970 | 4036 |
| 154 | ղեկային համակարգի յուղ | 3278 | 2293 | 2289 | 2433 | 2357 | 2367 | 2382 | 2421 |
| 155 | ծնկածև լիսեռի էլեկտրոնային ցուցիչ | 12018 | 8025 | 8012 | 12165 | 7856 | 7889 | 7941 | 8072 |
| 156 | ծնկածև լիսեռի էլեկտրոնային ցուցիչի փոխարինում | 5463 | 3821 | 3815 | 4055 | 3928 | 3944 | 3970 | 4036 |
| 157 | Անվակունդի առանցկակալ | 30044 | 7643 | 7630 | 7299 | 7856 | 7889 | 8338 | 8475 |
| 158 | Անվակունդի առանցկակալի փոխարինում | 7648 | 5350 | 5341 | 5677 | 5499 | 5522 | 5558 | 5650 |
| 159 | Անվադողերի հեղույս և մանեկ | 1639 | 1146 | 1145 | 1216 | 1178 | 1183 | 1191 | 1211 |
| 160 | անվադողերի հեղույսի և մանեկի փոխարինում | 2731 | 1911 | 1908 | 2027 | 1964 | 1972 | 1985 | 2018 |
| 161 | Անվադողերի օդի ցուցիչ | 12018 | 7643 | 7630 | 8110 | 7856 | 7889 | 7941 | 8072 |
| 162 | Անվադողերի օդի ցուցիչի փոխարինում | 546 | 382 | 382 | 405 | 393 | 394 | 397 | 404 |

* *ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

** *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողով
ք. Երևան, Սարյան 22
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011183010
ՀՎՀՀ 02531594
Գլխավոր քարտուղար՝ Ա. Սաֆարյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Օվնե» ՍՊԸ
ք.Երևան, Մյասնիկյան 43/10
Կոնվերս Բանկ ՓԲԸ
Հ/Հ 1930069052700100
ՀՎՀՀ 00428675
Տնօրեն՝ Ա.Բաղդասարյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ.

*Հավելված 3*
*«    »        20    թ. կնքված*
*ՀԾԿՀ-20/6-ԳՀԾՁԲ-1 ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ

________________________

________________________

գտնվելու վայրը ____________
հհ ________________________
հվհհ ______________________

Պատվիրատու

________________________

________________________

գտնվելու վայրը ____________
հհ________________________
հվհհ______________________

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ**
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*«    » «            » 20    թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «    » «            » 20    թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

________________________
ստորագրություն

________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

________________________
ստորագրություն

________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«    »      20    թ. կնքված*
*ՀԾԿՀ-20/6-ԳՀԾՁԲ-1 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը                                                    Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20    թ. ____________________-ին կնքված N ____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը                                    պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20  թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն